



«Յետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն

Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
Email:armenmirzoian@gmail.com, info@hetq.am, URL : www.hetq.am

08.09.2021թ

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

Հարգելի՛ պարոն Փաշինյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, խնդրում եմ տալ հետևյալ հարցերի պատասխանները.

1. Հայաստանի Հանրապետությունում պետական ո՞ր կառույցն է զբաղվում գերիների վերադարձի շուրջ վարվող բանակցություններով:
2. Ինչու՞ պետական որևէ գերատեսչություն հաղորդագրություն չտարածեց սեպտեմբերի 7-ին Բաքվից Հայաստան վերադարձած երկու գերիների մասով:
3. Ինչու՞ պետական որևէ գերատեսչություն պաշտոնապես չի հայտարարել վերադարձած գերիների անունները:
4. Ինչու՞ հայկական կողմը պաշտոնապես չի հայտարարել ադրբեջանցի գերուև Բաքվին փոխանցելու մասին:
5. Ինչպե՞ս է կատարվել սեպտեմբերի 7-ին Հայաստան վերադարձած գերիների փոխանակումը:
6. Ո՞վ է կազմակերպել այդ գերիների վերադարձը Հայաստան:
7. Ինչու՞ Պաշտպանության նախարարությունը [տեղեկություն չունեղ](#) այդ գերիների հնարավոր գերեվարման, նրանց կարգավիճակի, գտնվելու վայրի և վարվող բանակցությունների վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

«Ջետաքննող լրագրողներ» ՋԿ

«Ջետք» թերթի լրագրող

Արմեն Միրզոյան

A handwritten signature in blue ink, appearing to be 'Armen Mirzoyan', written in a cursive style.